Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում, թիվ 3 և թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ների ջեռուցման համակարգի կառուցում, գազաֆիկացում, հին դռների և պատուհանների փոխարինում՝ նորով, Արաքս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում, Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում, Լուկաշին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի օդափոխության և ջեռուցման համակարգերի կառուցում:
Մարզ	Արմավիր
Համայնքը /համայնքները	Արմավիր համայնք / ք. Արմավիր / Արաքս գ. / Լուկաշին գ. / Մյասնիկյան գ.
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Արմավիր համայնք, ք. Արմավիր 44 կմ/ 0 կմ Արաքս գյուղ 54 կմ/ 10 կմ Լուկաշին գյուղ 51 կմ/ 7 կմ Մյասնիկյան գյուղ 56 կմ/ 12 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	64, 211 մարդ , որից՝ Արմավիր քաղաք - 38,496, Արաքս գյուղ – 2145, Լուկաշին գյուղ -2653, Մյասնիկյան գյուղ- 4493
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Ոչ
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	Ոչ
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո, 11.02.2010թ. (ք. Արմավիր) Ոչ՝ համայնքի մնացած բնակավայրերում
Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակնշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի	Արմավիր համայնքի Արմավիր քաղաքը ամբողջովին ապահովված է 24-ժամյա ջրամատակարարմամբ: Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնում է <<Վեոլիա ջուր>> ընկերությունը: Անձրևատար կոյուղի կա միայն Երևանյան փողոցում: Արաքս գյուղում ջրամատակարարումն իրականացվում է խորքային հորերի միջոցով, բնակչության 96%-ի շրջանում: Ջրամատակարման տևողությունը օրական 4 ժամ է: Լուկաշին գյուղն ունի կենտրոնացված ջրամատակարարում, բնակավայրն ամբողջովին ապահովված է մշտական (24 ժամ) խմելու ջրով, համակարգը կառավարվում է <<Վեոլիա ջուր>> ընկերության կողմից: Լուկաշինում չկա ջրահեռացման կենտրոնացված համակարգ, հարցը լուծվում է բնակիչների կողմից՝ տեղային կոյուղի կառուցելու

բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	միջոցով: Մյասնիկյան գյուղի ջրամատակարարումն ապահովում է <<Վեոլիա ջուր>> ընկերությունը, օրական՝ 12 ժամ: Ջրահեռացման համակարգը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Արմավիր քաղաքի բնակչության մոտ 82%-ը ապահովված է գազամատակարարմամբ: Արաքս և Մյասնիկյան համայնքներում՝ բնակչության 95%-ը, Լուկաշինում՝ 90%-ը: Արմավիր քաղաքում ոռոգման համակարգը ընդգրկում է ոռոգվող տարածքների մոտ 80%-ը և ջուրը բնակչությանը մատակարարվում է խորքային հորերի միջոցով՝ համայնքային ՀՈԱԿ-ի և Արմավիր ՋՕԸ-ի կողմից: Արմավիր քաղաքի գյուղ նշանակության հողերը ոռոգվում է ՋՕԸ-ի կողմից և ընդգրկում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մոտ 85%-ը, Արաքսում՝ 80%-ը Լուկաշինում 85%-ը, Մյասնիկյանում՝ 50 %-ը : Էլեկտրամատակարարումն իրականացվում է համայնքի ողջ տարածքում: Արմավիր քաղաքի փողոցների մոտ 95% -ը ապահովված է լուսավորությամբ: Քաղաքի կենտրոնական փողոցները և բակային տարածքները հիմնականում ապահովված են գիշերային լուսավորությամբ: Երկրորդային փողոցների և բակային տարածքների լուսավորության ապահովումը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է <<Արմավիր համայնքի լուսավորություն>> ՀՈԱԿ-ի միջոցով՝ տեղադրելով ԼԵԴ լուսատուներ: Արաքս գյուղում փողոցների 97%-ը ապահովված է լուսավորությամբ: Լուկաշին գյուղում փողոցների 100%-ը ապահովված է լուսավորությամբ, որից 60%-ը LED էլեկտրախնայող լուսատուներով է: Մյասնիկյան գյուղում լուսավորված է փողոցների 80 %-ը, որից 40%-ը կազմում է LED էլեկտրախնայող լուսատուներով լուսավորված փողոցները: Համայնքի մասը կազմող մնացած բնակավայրերում ենթակառուցվածքների կարգավիճակը միանման է. ոռոգվում է գյուղական բնակավայրերի տարածքների մեծ մասը, խմելու ջուրը մատակարարվում է միջինում օրական 2 ժամ՝ խորքային հորերի միջոցով, փողոցային լուսավորությունը ընդգրկում է ընդհանուր փողոցների մեծ մասը, սակայն քիչ տոկոս է կազմում LED էներգախնայող լուսատուներով փողոցները:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 3 և 7 մակապարտեզ ՀՈԱԿ-ները կառուցվել են 1958 և 1973 թթ.-ին, ունեն համապատասխանաբար 31,8 x 12,6 մ (860 մ² ընդհանուր մակերեսով) և 34,5 x 32,0մ (1233 մ² ընդհանուր մակերեսով) արտաքին չափսեր: Անհրաժեշտ է փոխարինել մանկապարտեզների շենքերի 1958 թ.-ից

	տեղադրված փայտե պատուհանները՝ մետաղապլաստե ջերմամեկուսիչ պատուհաններով, կառուցել նոր ջեռուցման համակարգ՝ տեղադրելով ջեռուցման էներգախնայող կաթսաներ: Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքը կառուցվել է 1980-ական թթ-ի սկզբին, շենքի ընդհանուր մակերեսը 1238,3 մ^2 է: Անհրաժեշտ է ամբողջովին հիմնանորոգել մանկապարտեզի շենքը, գազաֆիկացնել և կառուցել ջեռուցման համակարգ: Լուկաշին գյուղի մանկապարտեզը մեկ հարկանի քարե շինություն է, ունի 33,4 x 47,3 մ արտաքին չափս, ընդհանուր մակերեսը 573,3 մ^2 է: Անհրահեշտ է մանկապարտեզի շենքը գազաֆիկացնել և կառուցել ջեռուցման նոր համակարգ ՝ տեղադրելով ջեռուցման էներգախնայող կաթսաներ: Արաքս գյուղի մանկապարտեզը կառուցվել է 1970-ական թթ-ի սկզբին , հիմնական մասնաշենքն ունի 34 x 13 մ չափս, իսկ տնտեսական հատվածը՝ 17 x 7 մ չափս: Ընդհանուր մակերեսը 1001 մ^2 է: Անհրաժեշտ է ամբողջովին հիմնանորոգել մանկապարտեզի շենքը, գազաֆիկացնել և կառուցել ջեռուցման համակարգ: Մյասնիկյան գյուղի մանկապարտեզը կառուցվել է 1980-ական թթ-ի սկզբին , ունի 810,4 մ^2 մակերես՝ երկհարկանի երկու առաձին մասնաշենքով և տնտեսական առանձին հատվածով: Նախատեսվում է կառուցել մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգ: Ծրագրի իրականացման արդյունքում Արմավիր համայնքում կապահովվի 555 նախադպրոցական տարիքի երեխաների բարեկարգ միջավայրում զարգանալու հնարավորությունը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Արմավիր համայնքի 2021-2026 թթ ՀՀԶԾ-ով սահմանված ռազմավարական կարևորագույն ուղղություններից է համարվում մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները, որոնց իրականացումը միայն համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ. նախատեսվում է այն իրականացնել սուբվենցիայով տրամադրվող համաֆինանսավորվող և այլ ծրագրերի միջոցով: Վերանորոգումը խթան - կհանդիսանա երեխաների հոգևոր, սոցիալական և անձնային աճի ու զարգացման համար: Առաջնահերթ կբարելավվեն երեխաների կենցաղային պայմանները: Կբարելավվի երեխաների համար անվտանգության, խնամքի և կրթության համար անհրաժեշտ միջավայրը՝ այդ թվում շենքային և սանիտարական պայմանները, որն էլ կապահովի զարգացնող առարկայական միջավայր: Կփոխվի երեխաների վարքագիծը, կբարելավվեն ծնողների ակնկալիքներն ու սպասումները, ինչպես նաև կբարձրանա կենսամակարդակն ու աշխարհայացքը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Ծրագրով նախատեսվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները. - Կատարել ծրագրով նախատեսված մանկապարտեզների ուսումնասիրություն, վիճակի գնահատման և ցանկալի արդյունքի հասնելու համար համապատասխան արձանագրությունների կազմում: - Կատարված ուսումնասիրության տվյալների հիման վրա ճշգրիտ և

	մասնագիտորեն հիմնավորված տեխնիկական բնութագրի կազմում՝ առաջնորդվելով գործող նորմատիվային պահանջներով, ստանդարտներով և շինարարական նորմերով: - Ծրագրի ցանկալի արդյունք ապահովելու նպատակով նախատեսել աշխատանքների նկատմամբ տեխնիկական, հեղինակային և լաբորատոր փորձարկումների իրականացում: - Կատարել նախագծի փորձաքննություն: - Նախատեսվում է կատարել հետևյալ տեսակի և ծավալի աշխատանքներ՝ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Ջեռուցման համակարգի և գազատարի կառուցում 2" Փայտե պատուհանների փոխարինում՝ մետաղապլաստե, ջերմամեկուսիչ պատուհաններով – 139 մ^2 3. Փայտե դռների փոխարինում – 50,5 մ^2 Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Ջեռուցման համակարգի և գազատարի կառուցում 2. Փայտե պատուհանների փոխարինում՝ մետաղապլաստե, ջերմամեկուսիչ պատուհաններով – 116 մ^2 3. Փայտե դռների փոխարինում – 49,2 մ^2 Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Մանկապարտեզի ամբողջ շենքի հիմնանորոգում: Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Մանկապարտեզի շենքի գազաֆիկացում և ջեռուցման համակարգի կառուցում: Արմավիր համայնքի Արաքս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում, գազաֆիկացում և ջեռուցման համակարգի կառուցում: Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ. 1. Մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի կառուցում: Ծրագրի իրականացման համար համայնքը պատրաստ է ներդնել մոտ 103410000 ՀՀ դրամ, որը բյուջեի ֆոնդային մասում առկա է: Նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար գումար բյուջեում նախատեսված է:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Բոլոր մանկապարտեզները համարվում են Արմավիր համայնքի սեփականություն: Նախատեսվող ծախսերը համարվում են կապիտալ և հիմնական միջոցների ներդրման արդյունքում կբարձրանա գույքի հաշվեկշռային արժեքը:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի մոտ 47787 շահառուի բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան պայմաններ:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և	Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն ժամանակավոր՝ 40, հիմնական՝ 28 աշխատատեղեր:

դրանց նկարագրությունը	
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 1479408,6 դրամ. *Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	1479408,6	1491482,0	100,8
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1336769,6	1349299,1	100,9
- Սեփական եկամուտներ	569463,9	579801,6	101,8
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	134796,8	131409,4	97,5
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*			
- Վարչական բյուջեի ծախսեր	1319589,8	1163457,0	88,2
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	419401,6	286827,6	68,4
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*			
- ճանապարհաշինություն	366769,7	298364,9	81,3
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	9758,2	9462,4	97
- գյուղատնտեսություն			
-այլ	20920,9	10039,5	47,9
-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	3104706,0 դրամ. *Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	3104706,0
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	2091514,0
- սեփական եկամուտներ	1013192,0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	-
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	2234821,0
- Վարչական բյուջեի ծախսեր	1873211,0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	361610,0
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված	

	ծախսերը, *որից՝*	
	-	
	-	
	-	
	-	
	-	
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	2091814, որից համահարթեցում՝ 1078321,6	
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 7500000 դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 530000 դրամ, - ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 0 դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 5242000 դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 2068000 դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ 240000 դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝	**344700000 դրամ (100%)**	

էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	103410000 դրամ (30%)
Այլ ներդրողներ	0 դրամ (.... %)
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը 01.06. 2022թ. Տևողությունը 5 ամիս (150 օր)
Ծրագրի ծախսերը	*Աշխատանքները գտնվում են նախագծման փուլում:*
Ամսաթիվ	*27 հունվարի 2022թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Խ. Մկրտչյան , հեռ.՝ 091217412, khachikmkrtchyan1@gmail.com

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**
(անունը, ազգանունը)

Կ.Տ